ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստի

ք. Երևան	21 հոկտեմբերի 2026 թ. Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Վարդանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Գալստյան, Ա. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Ղազարյան

1 Ներկայացված շտկումների ուսումնասիրությունը և գնահատումը

Հանձնաժողովը վերսկսեց թիվ 2 արձանագրությամբ կասեցված նիստը և ուսումնասիրեց մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացված շտկումները:

1.1. «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված դիմում-հայտարարությունը և իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ հրավերով նախատեսված հավելված N 1.3-ի ձևով: Թիվ 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկված են:

1.2. «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է 4-րդ չափաբաժնի շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը՝ «Աթոռները կլինեն նոր և հավաքված վիճակում» ձևակերպումը հանվել է: Առաջարկվող ապրանքը և գնային առաջարկը չեն փոփոխվել: Արձանագրված անհամապատասխանությունը շտկված է:

1.3. Ընդունել ներկայացված շտկումները և «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ-ի՝ 2-րդ, «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի՝ 3-րդ և 4-րդ, «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի՝ 5-րդ չափաբաժինների հայտերը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան՝ բավարար: «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի հայտում շտկման ենթակա անհամապատասխանություն թիվ 2 արձանագրությամբ չէր արձանագրվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 Ընտրված մասնակիցների որոշումը

Հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտերի և հակադարձ աճուրդի արդյունքում ներկայացված նվազագույն վերջնական գնային առաջարկների հիման վրա ընտրված մասնակիցներ (հաղթողներ) ճանաչել՝

Չ/Հ	Գնման առարկան	Ընտրված մասնակիցը	Վերջնական գինը՝ ՀՀ դրամ, ԱԱՀ ներառյալ
2	բազկաթոռ՝ ղեկավարի	«ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ	180 000
3	աթոռ մետաղյա	«Արգավանդ Կահույք» ՍՊԸ	99 600
4	փոքր բազմոցներ	«Արգավանդ Կահույք» ՍՊԸ	434 400
5	միկրոալիքային վառարաններ	«Փրիթի Ուեյ» ՍՊԸ	34 800

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3 Առաջին չափաբաժնի վերաբերյալ

Արձանագրել, որ 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգը թիվ 2 արձանագրության 14.1 կետով հայտարարվել է չկայացած, քանի որ բոլոր վերջնական գները գերազանցում են չափաբաժնի համար սահմանված գինը: Այդ չափաբաժնով ընտրված մասնակից չի ճանաչվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4 Պայմանագիր կնքելու որոշման հրապարակումը և անգործության ժամկետը

4.1. Հաստատել 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշումը և հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել ապահովել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումը տեղեկագրում՝ որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրվանից ոչ ուշ:

4.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

4.3. Անգործության ժամկետը լրանալուց հետո, պայմանագիր կնքելու իրավասության առաջացման դեպքում, ընտրված մասնակիցներին հրավերով և օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Գնումը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով՝ համաձայն հրավերի պայմանների:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5 Նիստին ներկա անձանց ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Ն. Գալստյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Ա. Դավթյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ս. Ղազարյան